**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-23/19-1**

ք.Երևան «29» « 08» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Գրիգոր Հարությունյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Շինկենտրոն» ՓԲԸ-ն՝ ի դեմս տնօրեն՝ Կորյուն Արզումանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 18.08.2023թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-23/19-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 և 7.15 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 06.07.2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, ՀՀ կառավարության 2022թ.-ի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1107-Ն որոշումը, որով հատկացվել է Պաայմանագրի N1 չափաբաժնով նախատեսված ծառայության համար անհրաժեշտ գումարը, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-23/19-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնչված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Շինկենտրոն» ՓԲԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Ք. Երևան, Աշտարակի խճուղի, 45 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011039790 | Հ/Հ 1150015010440434 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 03300044 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղարի Պ/Կ Գ.Հարությունյան | Տնօրեն՝ Կ. Արզումանյան |
| ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ | ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«29» «08» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-23/19-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայություն | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 71351540/509 | ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի, պահպանության և դիտաշտարակների վերանորոգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | - | 400.000 | 400.000 |
| 2 | 71351540/510 | ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի և վարչական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | - | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն | |

* Վճարման ենթակա գումարը ներկայացվում է աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Գ.Հարությունյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Շինկենտրոն» ՓԲԸ
Ք. Երևան, Աշտարակի խճուղի, 45
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150015010440434
ՀՎՀՀ 03300044

Տնօրեն՝
Կ. Արզումանյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ